ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2026թ. №_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով», միաժամանակ, հիմք ընդունել նաև ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված դիմումը:

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Նալբանդյան փողոցի հ.50 շենքի հ.հ.180 և 181 հասցեներում գտնվող, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 15.08.2002թ. հ.հ.504306 և 504310 վկայականներ) 464.0քմ և 257.0քմ մակերեսով տարածքների համար «Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի հետ 03.05.2021թ. կնքված անհատույց օգտագործման հ.հ.1572 և 1574 պայմանագրերի գործողության ժամկետները սահմանել մինչև 2031 թվականի մայիսի 1-ը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված անհատույց օգտագործման պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրերի կնքման գործընթացը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Նալբանդյան փողոցի հ.50 շենքի հ.հ.180 և 181 հասցեներում գտնվող 464.0քմ և 257.0քմ մակերեսներով տարածքների համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի նախարարության «Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի հետ 03.05.2021թ. կնքված անհատույց օգտագործման հ.հ.1572 և 1574 պայմանագրերի գործողության ժամկետները սահմանել մինչև 2031 թվականի մայիսի 1-ը:

Նալբանդյան փողոցի հ.50 շենքի հ.հ.180 և 181 հասցեներում գտնվող 464.0քմ և 257.0քմ մակերեսներով տարածքները համաձայն անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 15.08.2002թ. հ.հ.504306 և 504310 վկայականների տվյալների հանդիսանում են Երևան համայնքի սեփականությունը:

Կենտրոն համայնքի ավագանու 25.07.2008թ. հ.5/38 որոշման համաձայն՝ քննարկվող տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով, հինգ տարի ժամկետով տրամադրվել են «Բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին:

Երևան քաղաքի ավագանու 16.03.2021թ. հ.354-Ա և Երևանի քաղաքապետի 25.03.2021թ. հ.819-Ա որոշումների հիման վրա երկարաձգվել է քննարկվող տարածքների անհատույց օգտագործման ժամկետները մինչև 30.03.2026թ.: Որոշումների հիման վրա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի նախարարության «Վլադիմիր Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի հետ 03.05.2021թ. կնքվել են գույքի անհատույց օգտագործման հ.հ.1572 և 1574 պայմանագրերը, որոնցից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.հ.11052021-01-0230, 11052021-01-0113 վկայականներ/:

Մարզադպրոցը հիմնադրվել է 1959 թվականին ի պատիվ օլիմպիական խաղերի չեմպիոն Վլադիմիր Ենգիբարյանի և գործում է որպես բռնցքամարտի մասնագիտացված մարզադպրոց, որտեղ անվճար հիմունքներով մարզվում են 380 մարզիկներ: Մարզադպրոցի սաները միշտ աչքի են ընկել իրենց նվաճումներով օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, Եվրոպական խաղերում, բազմիցս ապացուցելով հայկական բռնցքամարտի բարձր կարգը:

Ելնելով վերը շարադրվածից և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը

օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» հ.463-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ